**Արձանագրության 3**

**Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բակային տարածքների բարեկարգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-18/71 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

02.03.2018թ.
ժամը՝ 10:40

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Կիրակոսյան /գնահատող/, Ե. Կարապետյան /գնահատող/
Ա. Հարությունյան /բացող/, Կ. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

## 1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

---

(Տ. Իգիթյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:*

## 2. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

---

(Տ. Իգիթյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

| **Մասնակցի անվանումը** | **Հայտի գնահատականը** |
|---|---|
| «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ | Բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

## 3. ԵՔ-ԲՄԾՁԲ-18/71 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

---

(Տ. Իգիթյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/71» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ին և վերջինիս ներկայացնել **Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բակային տարածքների բարեկարգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների** մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ տասն օրացուցային օր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին**

---

(Տ. Իգիթյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:10-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ------------------------------ Տ. Իգիթյան

Անդամներ՝ ------------------------------ Ե. Կարապետյան

------------------------------ Ա. Կիրակոսյան

------------------------------ Կ. Հարությունյան

------------------------------ Ա. Հարությունյան

Քարտուղար՝ ------------------------------ Ա. Համբարձումյան